ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 44-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 26-ին, հինգշաբթի, կեսօրից հետո ժամը 3-ին, Հոգևոր Ճեմարանում կազմակերպվեց գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 44-րդ տարեդարձին։

Հանդիսության նախագահում էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը։

Հանդիսությունը բացվում է Հայկական ՍՍՌ պետական հիմնի նվագով։

Հոգևոր Ճեմարանի հայոց լեզվի և գրականության դասախոս Պարգև Շահբազյանը այնուհետև հանդես է գալիս տոնի ազգային-պետական նշանակության և խորհրդին նվիրված բացման խոսքով։

Բ դասարանի ուսանող Արարատ Գալստյանը դաշնամուրի վրա նվագում է Բարխուդարյանի «Արևելյան պար»-ը, իսկ լսարանական բաժնի ուսանող Եղիշե Բաղրամյանը արտասանում է Նաիրի Զարյանի «Վերածնունդ»-ը։

Օրվա գլխավոր բանախոսն էր Հոգևոր Ճեմարանի գրաբար լեզվի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Սամվել Անթոսյանը, որն իր բովանդակալից զեկուցման մեջ հանգամանորեն վեր հանեց պետականություն ունենալու բարիքները հայ ժողովրդի կյանքում, անցնող 44 տարիների ընթացքում, ազգային ճշմարիտ վերածննդյան պայմաններում։

Լսարանական բաժնից ուսանող Գրիգոր Բունիաթյանը արտասանեց Վ. Գրիգորյանի «Սա իմ երկիրն է» բանաստեղծությունը։

Հանդիսության իր մասնակցությունն է բերում նաև Հոգևոր Ճեմարանի ուսանողական երգչախումբը, որը Ճեմարանի հայ երաժշտության դասախոս հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանի ղեկավարությամբ հաջողությամբ կատարում է մի շարք խմբերգեր, որոնց թվում Առնո Բաբաջանյանի «Երիտասարդական»-ը, Ալեքսանդր Հարությունյանի «Երիտասարդական քայլերգ»-ը, Երվանդ Սարգարյանի «Երգ խաղաղության»-ը և Կոմիտաս վարդապետի «Սիփանա քաջեր»-ը։

Հանդիսության վերջում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ողջույնի և օրհնության խոսք ասաց ազգային-պետական մեծ տոնի 44-րդ տարեդարձի բարեբաստիկ առիթով և հայրապետական իր ջերմ պատգամն ուղղելով Մայր Աթոռի միաբանության և Հոգևոր Ճեմարանի ուսանողության, հորդորեց լինել որքան հավատի, գիտության, նվիրման, նույնքան և հայրենասիրության մարդ, որովհետև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, իր գոյության առաջին իսկ օրերից, իր կյանքն ու ճակատագիրը սերտորեն կապել է հայ ժողովրդի կյանքի, ճակատագրի և ապագայի հետ։

Այնուհետև, իր խոսքի վերջավորության, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն օրհնում է մի անգամ ևս մեր վերածնված Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, մեր շինարար և խաղաղասեր, ստեղծագործ ժողովրդին, բարեմաղթելով, որ խաղաղություն լինի համայն աշխարհում և բոլոր հայ երդիկների տակ։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 44-րդ տարեդարձին նվիրված հանդիսությունը վերջանում է ազգիս հայրենասեր Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով։

***

Նոյեմբերի 28-ին, շաբաթ օր, Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի առաջ, կիրակամտի ժամերգությունից հետո, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է կառավարական մաղթանք՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 44-րդ տարեդարձի առթիվ։

Գոհաբանական աղոթքին ներկա են լինում Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի վերատեսչությունը, ուսանողությունը, վանքի պաշտոնեությունը և բազմաթիվ հավատացյալներ։